ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԱՍԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ ՈՐ ՅԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, ՌԴ

Յարգարժան պրն. Նազարեան,

Գոհունակութիւն է Հայրապետիս համար Սուրբ Յովհաննէս Կարապետ եկեղեցու օծման բերկրալի առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքը բերել Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սիրելի զաւակիդ:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսեանից տեղեկացանք Ձեր գովարժան ծառայութիւնների մասին: Այսօր ուրախութեամբ ենք հաստատում, որ ծնուելով ու հասակ առնելով Իրանում, Դուք ժառանգել էք ազգասէր ու եկեղեցասէր ոգին իրանահայ աւանդաշատ համայնքի, որի բազմադարեայ պատմութիւնը վառ օրինակ է մեր ժողովրդի հաւատաւոր ոգու, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ որդիական սիրոյ ու նուիրումի:

Տասնեակ տարիներ Դուք աշխոյժ գործունէութիւն էք ծաւալում ՌԴ Եկատերինբուրգ քաղաքի հայութեան համայնքային կեանքում: Հայրապետիս համար գոհունակութիւն է, որ մշտապէս աջակցելով Տիրախնամ թեմի առաքելութեան իրականացմանը, ազգասէր ու եկեղեցասէր ոգով Դուք հովանաւորեցիք նաեւ հայկական եկեղեցու կառուցման ապրուածահաճոյ նախաձեռնութիւնը: Հաւատաւոր Մեր զաւակների հետ աղօթակցութեամբ կատարելով նորակառոյց աղօթատան օծման սրբազան արարողութիւնը, Մենք փառք ենք մատուցում Տիրոջը, որ եկեղեցու հովանու ներքոյ այսուհետ առաւել պայծառ պիտի լինի հայորդիների հոգեւոր ու ազգային կեանքը եւ զօրաւոր՝ ինքնութեան գիտակցութիւնը նրանց հոգիներում:

Բարձր գնահատելով Ձեր ծառայութիւնները մեր Եկեղեցուն ու հաւատաւոր

ժողովրդին, սիրով ընդառաջում ենք թեմական Առաջնորդի ազնիւ խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ Ձեր ազգանուէր ծառայութիւնները պիտի շարունակեն արդիւնաւորուել ասպուածահաճոյ նորանոր իրագործումներով՝ ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու եւ ի զօրացումն համազգային մեր կեանքի:

Թող Տէրը քաջառողջ երկար կեանք եւ գործոց յարանորոգ յաջողութիւններ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ հանապազ պահպանելով Իր խնամքի եւ օրհնութեան մէջ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 812